

Առօր

ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳԻՆ 100 ՓՐ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Ն. ԳԱԼՈՒԾՅԱՆ

◆ Տէր ԷԼՏՅՈՐԿՈՒ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 15

29 ՄԱՅԻՍ 1920

15-15-1



ՏՔԹ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային
եւ տղայոց հիւանդութեանց
Գումգարու, Զիֆթէ Կէլին, դեղ. Ա. Ս.
Արսէնեան, թիւ 118 եւ Կէտէկ Փաշա
Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ լաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, Երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ գլխացաւի. Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց. Կենսաբանական վերջին
տուիքներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կածութիւնը. Առողջական վիճակի ման-
րազնին ըննութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջըր
կ'առնէ. Հիւանդագին եւ փափկակազս
աղաքներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ.

ՆՈՐ ՀԱԳՈՒՍՏ. — Պզտիկնե՛ր, 250
դրուշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
յին հագուստ ունենալու համար ծնողք-
նիդ առաջնորդեցէ՛ք Զաքմաքճըլար,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վաճառատունը.

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՇԷՔԵՐԵԱՆ

Զաքմաքճըլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Դ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայագիտ, Մաքասճըլար, թիւ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄ ԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ ՏՔԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզհէթ
Զիա դեղարանին վերնայարկը.

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻՒ 2

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան
նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԱՆ ԱՏՄԵՂԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, նոր նամակատան կից, Նիւզհէթ
պէյի դեղարանը, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակունքներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ առամնաշարքեր, գուրօններ,
պուիչներ եւ բիփօներ.

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Օրխան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ գեղարուեստական
ամենանորը ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն.

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն. Պահնէ Գաբու: Մէյվախօճ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔ

(ՀԱՅԿ. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ)

Փոքրիկ բարեկամս՝ րս,

Նախապէս ուրիշ առիթներով խօսած եմ հայրենիքի, հայրենասիրական զգացման ու այս զգացումին մշակման ու անկէ առաջ գալիք բարիքներու և օգուտներու մասին: Վստահ եմ թէ այս ուղղակի ձեր սիրտերուն խօսող ու ձեզ խանդավառող նիւթ մըն է ու այդ իսկ պատճառաւ Հայկական Անկախութեան Տօնին այս յաւէտ յիշատակելի առիթով նորէն քանի մը թելադրութիւններ պիտի ընեմ այս ուղղութեամբ:

Այո՛, մենք ամէնքս ալ ունինք հայրենիք մը և ճշմարիտ հայրենասիրութեամբ կը սիրենք զայն: Ասոնք իրողութիւններ են, որոնց համար կասկածիլ անկարելի է: Բայց ամէն Հայու սիրտին մէջ կայ խոր ու անմարելի փափաք մը, որ ուրիշ բան մը չէ, եթէ ոչ բուն բաղձանքը ունենալու Ազատ Հայրենիք: Ազատութեան սէրը մարդու համար ընդօժին սէր մըն է: Գիտէք թէ ի՞նչ կ'ըսէ ազատատենչ Հայ պուէտը.

«Ազատն Աստուած ա՛յն օրից

Երբ հանեցաւ շունչ փչել

Իմ նողանիւք շինուածքին

Կենդանութիւն պարգեւել:

Ես անբարբառ մի մանուկ՝

Երկու ձեռքս պարզեցի

Եւ իմ անգօր թւերով

Ազատութիւն գրկեցի:»

Ուրիշ պուէտ մը ազատութեան համար Յեղին թափած հեղեղանման տրիւնին ակնարկելով կը ձայնէ. —

Ազատութեան սիրոյն համար

Շատ արիւններ քափուեցան.

Այնպէս որ ազատութեան այս սէրը, որ մեր մանուկ հասակին մէջ իսկ իր նորաբողբոջ ծիլերը կը ցցէ մեր սիրտերուն մէջէն, մեր կեանքի տարիներուն հետ ա՛լ աւելի կ'աճի ու կ'ուռճանայ իբրեւ կաղնի մը հաստաբուն, ու մենք երբ արբուն հասակը կը թեւակոխենք, առնական կորովով ու քաջութեամբ գօտեսնողուած՝ կ'ուզենք լիակատար ազատութիւն վայելել, իբրեւ մարդ ու իբրեւ քաղաքացի: Ազատութեան բաղձանքը ոչ միայն մեր անձին համար, այլ զգալով թէ՛ մենք անբաժանելի անդամներն ենք հաւաքականութեան մը՝ նոյնը կը փափաքին այն ազգին համար, որուն կը պատկանինք: Եւ որովհետեւ ամէն ազգ ունի նաեւ իր հայրենի երկիրը, կը փափաքինք որ

մեր հայրենիքն ալ ըլլայ ազատ ու անկախ, տէրը իր ճակատագրին, պանծացուած ու բարգաւաճ իր իսկ որդիներուն անձնուէր զոհողութեանց ու տքնաջան աշխատութեանց զինով: Այս իսկապէս մարդավայել ու պատուարներ զգացում մըն է. ու ատոր համար անպատճառ չափահաս տարիքի անձեր ըլլալ կամ մեծ հասակութիւն ունենալ սկստք չէ: Այո՛, ձեզ նման նորահասներ որ դեռ ուղղակի գործունէութեան բաժիններ չէք ստանձնած հայրենիքին համար, դո՛ւք ալ կրնաք ունենալ այս փափաքն ու նախանձախնդրութիւնը ձեր անձին, ձեր ցեղին ու ձեր հայրենիքին համար ու ըլլալ ազատորդիներ ազատ հայրենիքին: Կ'արժէ որ, ո՛վ դեռատի ընթերցողներս, մշակէք այս զգացումը ձեր սիրտերուն մէջ. կարգաք հայրենասիրական գրուածքներ, ներշնչուիք մեծ հայրենասէրներու և ազատատենչ հերոսներու օրինակով: Որովհետեւ մարդ իբրեւ ճշմարիտ մարդ ասլքելու համար ազատ ապրելու է, ազատ հայրենիքի մէջ: Ա՛խ, արդեօք աշխարհի մէջ կա՞յ ուրիշ ցեղ մը, որ Հայուն չափ զգացած ըլլայ ստրկութեան շղթային ծանրութիւնը, ու անոր չափ քամած գերութեան թունեղ բաժակը: Դիտցէք թէ, ազատութեան համար Հայուն չափ տառապող, Հայուն չափ մաքառող, Հայուն չափ իր երակներու արիւնը գետաբար թափող ցեղ մը, ժողովուրդ մը չկայ: Մեր ցեղին արեան զոհողութիւններով տառնեակ մը ազգեր կրնային ազատագրուիլ, եթէ գութն ու կարեկցութիւնը չորցած չըլլային աշխարհիս մեծամեծներուն սիրտերուն մէջ: Ա՛լ արիւն չի մնաց Հայուն երակներուն մէջ, թափելու համար, ցեղին տառապանքը լալէն Հայուն աչքերը չորցան, քարացան: Մինչեւ որ Հայր ա՛լ գերագոյն ճիգով մը խորտակելով իր ազատութիւնը կաշկանդող ստրկութեան ժանգոտ շղթաները՝ զէնք առաւ, ու կռուեցաւ իր ազատութեան համար. պայքարեցաւ իբրեւ ազատ քաղաքացի ազատ հայրենիքի մը մէջ ապրելու համար, ու ահա տեղի ունեցաւ Մեծ Իրականութիւնը — Հայր վերջապէս ազատ...:

Հայկական Անկախութեան այս բարեբաւտիկ տարեդարձին առթիւ իբրեւ ձեզմով երկար տարիներ զբաղած ձեր մէկ մտերիմ բարեկամը, հոգիիս խորերէն կը բղխին մաղթանքներու տարափներ, որոնց տակ քաղցր էինձ յուսալ թէ պիտի ծլիք, ծաղկիք՝ իբրեւ ազատ հայորդիներ: Մեր սերունդը շատ տառապեցաւ հայկական ազատութեան համար, բայց կը մաղթեմ որ ձեր սերունդը, որ բախտաւորութիւնը ունեցաւ ողջունելու Հայկական Անկախութեան նորածաղ Արեւը, որ ահա կը բարձրանայ վեհափառ Արարատի բարձունքներէն, իբրեւ ազատ հայորդիներ վայելէք Հայ Անկախութիւնը, Ազատ Հայաստանի մէջ: Երջանիկ, երջանիկ այս Տօնին առթիւ, որուն առթած խանդն ու խնծիղը կ'ուռեցնէ ամէն Հայ սիրտ, երբ հայրական գորովով ու գուրգուրանքով կը համբուրեմ ձա-կատը իմ մէկ հատիկ ազատունի աղջնակիս, այդ համբոյրին համակ հրայրքն ու՞րոցը դրոշմել կը փափաքիմ նաեւ ձեր անամպ ճակատներուն վրայ, ազա՛տ հայորդիներ, համբո՛յր ձեր Հայ ազատութեան վարդ ցոլ-քերով ողողուն ճակատներուն: Շատ, շատ ապրիք մեր Ազաւ հայրենի-քին մեզ:

ՀԱՅԱՍՏԱՆ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՅԼԵՐԳ)

Հայասան, քաղցր հայրենիք,
Դրախտավայր իմ բնիկ,
Դուրգուրոս մայր Հայութեան,
Դուն ո՛վ երկիր պատմական.

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան,
Պատիւ քու անուան,
Եղի՛ր անսասան
Միշտ եւ յաւիտեան:

Անմահ պապեր քաջազուն
Քու ծոցիդ մեջ սիրասուն՝
Բերին Յեղին փառք, պատիւ,
Դարեր, դարեր բազմաթիւ.

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան եւայլն:

Յարգա՛նք յաւեհ հին ու նոր
Հերոսներուն քու բոլոր,
Որ զոհուեցան քեզ համար
Հազարներով անհամար.

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան եւայլն:

Ազատութեան սենյալի
Վարդ Այգն ահա կը փայլի՝
Կարմրած արեամբ յորդահոս՝
Զաւակներուն քու հերոս.

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան եւլն.:

Սուրբ հողերդ ա՛լ չեն պղծեր
Մեր դարաւոր ոսոխներ,
Խաղաղութեամբ կը ծաղկին
Բերրի դաշերդ ցնծագին.

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան եւլն.:

Տո՛ւն օրհնութեան եղի՛ր դուն
Սերունդներու եռանդուն,
Մեզ սարերուդ յար ազատ
Թող ցեղդ իշխէ հաւազատ,

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան եւլն.:

Ազատութեա՛ն դուն Աստուած,
Լքէ անձկոս մեր հայցուած,
Թելերուդ սակ՝ միշտ պայծառ
Պահէ Հայոց մեր աշխարհ.

ԽՄԲ. Իմ Մայր Հայասան եւլն:

Նոր Հայութիւն, օ՛ն, ցնծուն,
Հայ դրօշին սակ եռագոյն՝
Գոչենք կեցցե՛ք յաւիտեան
Հայութեան Մայր Հայասան.

ԽՄԲ. Իմ մայր Հայասան,
Յարգա՛նք քու անուան,
Եղի՛ր անսասան,
Միշտ եւ յաւիտեան:

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Կ Ո Չ

Կը հրաւիրենք մեր յարգելի ձայնագրադէտ-ուսուցիչները կամ եր-
գահանները որ հաճին եղանակ մը յօրինել վերի քաղերգին, որ կը
կարծենք թէ իր կարճ տողերով և երգի համար կարեւոր տարիչ յար-
մարութիւններով, նամանաւանդ դիւրահասկնալիութեամբ կրնայ ժո-
ղովրդականանալ: Խմբագրութիւնս պիտի ջանայ ամենէն յաջող եղա-
նակը հրատարակել քաղերգին խօսքերուն հետ, յարմար առիթով մը:
ԽՄԲ.

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

Գ.

Ծ Ա Ղ Ի Կ

(Բ. Մաս)

Անցած դասին ըսած էի թէ ծաղիկն մասին մեր դասը կիսել պէտք պիտի ըլլար, հետեւաբար այսօր կ'ուղեմ չարուհեակն մեր դասը նոյն նիւթին վրայ։ Յուսալով որ ծաղիկներուն արտաքին ձեւերուն, չափրակներուն, բաժակին, առէջին կամ ուձային, իգային կամ սերմնափակին մասին ըսողը ըսածներս չէք մոռցած, կը փութամ աւելցնել թէ իգային կամ սերմնափակին տակն է որ փոքրիկ սերմը կամ հունքը կ'աճի։ Երբ գեղեցիկ ծաղիկը իր ձեւի ու գոյնի հոսպոյրներով կը դիւթէ մեր աչքերը, փոքրիկ սերմը անտեսանելիօրէն փոքր, կը սկսի աճիլ ծաղիկին մէջ, սերմնափակին յատակը։

Ինչպէ՞ս կը ձեւանան պտուղները. — Երբ ծաղիկին չափրակները չորնան ու իյնան սերմը կը չարուհեակէ մեծնալ՝ մինչև որ հասուննայ, մինչ ծաղիկին յատակը, որ սովորաբար Բանանչ է ու կարծր, կը մեծնայ սերմին շուրջը և կը ձեւացնէ պտուղը։

Դիմածաղիկը եւ տեսակները. — Օրինակի համար առնենք դըղմենիին դեղին, զանգակաձև, խոշոր ծաղիկը։ Ան նախ իր երեք շերտով չափրակներով օրուան լոյսը կը զուարթացնէ իր գեղեցիկ գոյնով. մինչ մըջիւններ, մեղուններ, պիծակներ ու թիթեռնիկներ ահ որ մէջ կը մխուրն ան-

կէ հիւթ ծծելու համար։ Նոյն ատեն փոքրիկ պտուղը կը մեծնայ այդ ծաղիկին յատակը։ Կամայ կամաց ծաղիկը կը չորնայ ու կ'իյնայ, և ուր որ ծաղիկ մը կար նախապէս՝ հիմա դըղումը կ'աճի ու կը հասուննայ։

Բայց դըղմենիին, վրայ ուրիշ ծաղիկներ կան. անոնք ալ խոշոր, դեղին, զանգականման ու գեղեցիկ են, բայց երբ անոնք չորնան ու իյնան՝ անոնց տեղ պտուղ չերեւար։ Ուրեմն անոնք ինչո՞ւ համար եղած են։ Ահաւասիկ խնդիր մը որ բաւական հետաքրքրական է։ Այդ ծաղիկներուն նայէ ու պիտի տեսնես թէ անոնց մէջ թէև որձայ կայ, բայց իգայ չկայ։ Այսօրինակ ծաղիկներ պտուղ չեն տար. որձայի մը մէջ սերմ չ'աճիր։

Բեղմնափոշին. — Ուրեմն, կրնաք հարցնել թէ, որձաները ի՞նչ են։ Որձաներու և իգաներու մասին շատ հետաքրքրական իրողութիւն մը կայ։ Որձաներու ծայրը այդ գնդիկներուն վրայ նուրբ փոշի մը կ'աճի. այդ փոշին երբ հասուննայ՝ գնդիկներէն դուրս կ'ելլէ և պիծակներ, թիթեռնիկներ և ուրիշ փոքրիկ արարածներ երբ ծաղիկին մէջը մտնեն այդ փոշին կը թաթաւէ անոնց թեւերն ու սրունքները։ Յետոյ կը թառին ուրիշ դըմածաղիկ մը որ իգայ ունի։ Հարկաւ կը քսուին այդ իգաներուն և այդ բեղմնափոշի կոչուած նուրբ փոշին որ միւս ծաղիկին որձայէն բերուած էր այս կերպով կանցնի այս երկրորդ ծաղիկին իգային։ Ահա ճիշդ այդ

ատեն, կ'սկսի մեծնալ իգային տակի սերմը կամ հունար, որ առանց ատոր երբեք չպիտի աճէր: Պէտք էր սր բեղմնափոշին գար որձայէն, եթէ ոչ իգային մէջ սերմը չպիտի աճէր: Ուրեմն կը տեսնէք թէ որձաները կատարելիք գործ ունին, այսինքն իրենց գընդիկներուն վրայ բեղմնափոշի առաջ կը բերեն: Առանց ատոր պըտուղ չըլլար:

Խնձորենիի ծաղիկը. — Բոյսերէն/ոմանք ալ նոյն ծաղիկին մէջ թէ որձայ թէ իգայ ունին: Այս ծաղիկներուն մէջ իգան մէջտեղը և որձաներն ալ շուրջանակի կը գտնուին: Խնձորենիի ծաղիկ մը տեսած էք երբեք: Ահա անոր մէջ իգան մէջտեղը և որձաները շուրջանակի են: Որձաներուն բեղմնափոշին իգային կը փոխանցուի ու միակ այդ կերպով է որ փոքրիկ խնձորը կ'սկսի աճիլ: Խնձորենիին այդ վարդագոյն ծաղիկները քանի մը օր օդը իրենց անուշ բոյրով խնկարկելէ ետքը վը թառամին ու կը թափին: Փոքրիկ խնձորը որ համրիչի հատիկէ մը իսկ փոքր է, կամաց կամաց վը խոշորնայ: Ու վերջապէս երբ աշունը գայ գեղեցիկ, համեղ խնձորներ վար կը կախուին խընձորենիին ծանրաբեռնուած ոտերէն: Միշտ յիշեցէք թէ որձաներն ու իգաներն էին որ յառաջ բերին այդ համեղ ու ակնապարար խնձորները:

Յորդոր. — Ինչ սքանչելի գաղտնիքներ ունի Մայր-Բնութիւնը: Ինչ հաճելի բան է սորվիլ բնութեան այս հրաշալիքներուն մասին: Իսկապէս հետա-

քրքրական և զարմանալի չէք գտներ ծաղիկի մասին այս դասը: Կը խոստանամք այս ըսածներս ալ ուսումնասիրել ծաղիկներուն վըրայ: Եթէ հիմակուընէ խոստանաք ինծի, թէ գործնականօրէն պիտի սորվիք այս ըսածներս ծաղիկներու վրայ, ես ալ կը խոստանամ ձեզ յաջորդ դասով խօսիլ պտուղներու մասին, որ կը յուսամ թէ՛ ան ալ իր կարգին պիտի ըլլայ հետաքրքրական ու թելադրիչ: Որովհետեւ գիտեմ թէ ինչպէս ծաղիկները տեսնել ու հոտուըտալ նոյնպէս ալ համեղ պտուղները ուտել կը սիրէք. այնպէս չէ:

Ամիսփեց
ԳՐ. Լ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՊԱՏԻՈՅ ՏԱԽՏԱԿ ՈՒՍՄԱՆՅ ԵՒ ՎԱՐՈՒՅ

Եէնի Գարուի Ազգ. վարժարանին Ա. կարգի աշակերտուհիներէն Օր. ՄԱՔՐՈՒՀԻ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ օրինակելի հանդիսացած է, իր ջանասիրութեամբը, լրջութեամբը և մտքրասիրութեամբը.

ԾԱՆՈԹ. — Կը խնդրուի վարժարանաց տնօրէններէն որպէսզի հաճին խմբագրութեանս հասցնել եթէ ոչ չաբաթը անգամ մը գոնէ և ամիսը անգամ մը, վարժարաններուն մէջ ուսմանց և վարուց մէջ օրինակելի, ինչպէս նաև ամավերջի քննութեանց մէջ յաջող հանդիսացող աշակերտներուն անունները, Պատուոյ Տախտակի այս ցանկին մէջ արձանագրելու համար:

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ԱՆՈՒՇ ՀԱՅՐԵՆԻՔ

Քեզ չեմ մոռնար, քեզ չեմ մոռնար,
Ո՛վ իմ անուշ հայրենիք,
Անունդ ինձ մըխիթար,
Յուշերովդ եմ երջանիկ:

Է՛ն ի՞նչ ընեմ ես օսարին
Ճոխութիւններն ու բարիք,
Սիրքս կաւոսն անհրնարին՝
Քե՛զ համար ե հայրենիք:

Օսար երկինքն ինձի համար
Արեւ չունի, ա՛մպ ունի,
Եսար աստղեր լոյսեր չեն վառ,
Այլ կաթիլներ արցունքի:

Օսար ծովեր ծիծաղ չունին,
Օսար լիներ ալ՝ ժրպիտ,
Օսար գետեր վիշտ կը հոսին,
Ու աղբիւրներ չե՛ն վընիտ:

Օսար դաշտեր չունին դալար,
Բուրասաններ՝ բոյր, փրփիթ,
Օսար այգին խաղող չի տար:
Գինին բոյն ե մահառիթ:

Օսար զարունն ինձ աշուն է,
Օսար ամառն ալ՝ ձմեռ .
Օսար ոչի՛նչ կը հրնուեցնէ,
Հոգիս որ քեզ ե փառէ:

Ես քեզմէ զաս եւ ո՛չ մէկ տեղ
Բնաւ չեմ ըլլար երջանիկ,
Դուն ես սիրքս վերհերուն դեղ,
Դո՛ւն հոգիս մեծ կարիք:

Անոր համար ո՛ւր ալ երթամ,
Ո՛ր աստղերու տակ ապրիմ,
Քեզ չեմ մոռնար ո՛չ մէկ անգամ,
Մե՛ծ, մե՛ծ կաւոսն ես դուն իմ:

Օր մը երբ որ ես սուրբ հողեր
Համբուրեմ ես կաւոսով,
Տառապանքներս չեմ աւաղեր՝
Սիրոյդ համար հոգեքով:

Քեզ չեմ մոռնար, քեզ չեմ մոռնար,
Ո՛վ իմ անուշ հայրենիք,
Ե՛րբ ծոցիդ մէջ սփոփարար
Աիտի ըլլամ երջանիկ:

ԳՐ . Հ . ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ

Է՛չն ի՞նչ գիտէ նուշը,
Կ'նրթայ կուտէ փուշը .
Յիմար մարդուն համար
Այս խօսքն է շատ յարմար:

Թըքած թուքը լղող է,

Կ'ըսեն այն մարդուն,
Որ իրիկուն խօսք կուտայ՝
Կը գըրթէ առտուն:

Ժամէն ես կուգամ,
Ողորմի Աստուած դուն կ'ըսես
Ծախքը ես հոգամ՝
Անուշ հրամեցէք դուն կ'ըսես:

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂԶՆԱԿԸ

Դ. ԴԵՊԻ ԳԱՆՁԻՆ ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ահա հիմա է որ փոքրիկ և քաջ Մարթա, պիտի խաղար իր խաղը : Ինք մինակ էր, լաւ գինուած երեք թշնամիներու դէմ, որոնցմէ մին խորամանկ տեղակալն էր որ չէր դադրեր գայն արհամարհոտ հետաքրքրութեամբ մը դիտելէ : Ուստի Մարթա հարկ դատեց այնքան խահմութեամբ, որքան փափկութեամբ և կորովով վարուիլ անոր հետ :

Երբ, տեղակալ Քոթպիւս երրորդ անգամ ըլլալով հարցուց խիստ շեշտով մը թէ ուր կը գտնուի հռչակաւոր գանձը, Մարթա պատասխանեց իր սմենէն մեղմ ձայնովը .

«Հոն կը գտնուիք : Ձեզ կը մնայ գայն գետնին տակէն հանել :»

Եւ անշփոթ պաղարիւնութեամբ մը, այնպէս մը ցուցնելով թէ՛ քարերը կը համրէր կանգ առաւ և ցոյց տալով աւելի լայն խոռոչ մը, բացատրեց .

«Այո՛, հոտ է վստահ եմ :»

Տեղակալ Քոթպիւս առանց վարանելու հրամայեց իր երկու գինուորներուն իրենց բոլոր ուժովը փորել գայն :

Երկու Գերմանները իրենց հրացանները տեղ մը տեղաւորելէ վերջ, վանգակորմին մէջ գտնուած գործիքներով, տեղակալէն խրախուսուած սկսան գործի :

Մարթա քովերնին է, փոր-

ուելու վրայ եղող հողին հակած, իբր թէ ամէն վայրկեան ան կը սպասէ մատնանշուած գանձին գտնուելուն :

Մարթայի դիրքը այնքան բնական էր որ, տեղակալը ինքն ալ, անձկութեամբ կը հետեւէր աշխատութեան, լսելու համար ձայնը զոր յառաջ պիտի բերէին գործիքները գանձատնտուկին դարնուելով : Սակայն իսկոյն անհամբեր ըլլալ սկսաւ :

Հակառակ գործին ջերմագին փարեղնուն, երկու Գերմանները, խոռոչին մէջ քարեր և սունկ միայն գտան :

Ամենամեծ հանդարտութիւն կեղծելով հանդերձ Մարթա զգաց թէ իր քունքերը և սիրաը կը բարախեն . . . : Տեղակալին կատաղի ընթացքէն, և այն սպառնալիքներէն՝ զորս ցոյց տալ կը սկսէին երկու գինուորները, ան որոշապէս գուշակեց թէ՛ իր ծրագիրը բոլորովին խանգարուելու վրայէ :

Անոնք վերջապէս պիտի հասկնային թէ ինք զիրենք ծաղրած էր : Եւ կարեւորը ան էր որ Գերմաններուն իրենց հետ խաղացուած ըլլալու համոզումը գոյացնելէ առաջ, պէտք էր գործադրած ըլլար իր ծրագրին երկրորդ մասը որ ամենադժուարինը և ամենափափուկն էր :

Հիմա որ անոնք, գետնայարկ

վանդակորմին մէջ, երեքը միասին երեւակայական գանձը գրտնելու դրադած են, գործը զանոնք այդ վանդակորմին մէջ փակելուն և ինքզինքը ազատելուն մէջ կը կայանար:

Միայն թէ, պզտիկ օղակսինը առանձինն չի պիտի կրնար երկաթէ ծանր վանդակը մէկ կողմ քնել, և միեւնոյն ժամանակ կըզպել, քանի որ, ինչպէս հաւանական է ժանգը կրնար զայն խաթարած ըլլար: Բարեբախտաբար ժիւլիէն հոն էր և պիտի կրնար օգնութեան հասնիլ ծրագիրը իրականացնելու երեւակայած հնարքին գործադրութեանը համար: Աղջիկը այսպէս մտածելու իրաւունք ունէր, քանի որ ինք արդէն այնքան պնդած էր ժիւլիէնի ֆօնթէն-Օ-Րիզ գտնուելու մասին: Միայն կը մնար, վարը գետնայարկի մուտքին քով ժիւլիէնի ընկերանալ առանց երեք Գերմաններուն կասկածը հրաւիրելու:

Արդ, Մարթա շատ կը կասկածէր որ դէպի դուռը իր կողմէ ըլլալիք առաջին շարժումներէն իսկ երեք պահապաններուն մէջ պիտի արթնցնէր փախուստի գաղափարը: Ուրկէ վերջ անոնք պիտի յարձակէին իր վրայ:

Անոնց ձեռքէն չի կարենալ խոյս տալուն վրայ չէր խնդիրը: Անիկա այնքան կայտառ էր, և այնքան լաւ գիտէր տեղւոյն անտառին ամէն ծակն ու ծուկը որ ան պիտի կրնար արագօրէն աներեւոյթ ըլլար մինչեւ որ երեք Գերմանները անակնկալին վերահասու ըլլային: Խնդիրը կը կայանար զանոնք բանտարկելուն մէջ: Եթէ

անոնք չբանտարկուէին խոհեմ սղջիկը լաւ կը նախատեսէր թէ ինչեր պիտի պատահէին: Ան յաճախ լսած էր պատմուիլը սոսկալի խժոժութեանց, զորս Գերմանները ի գործ դրած էին այն երկիրներուն մէջ երբ հոն ներկայ եղած էին բարկութիւն առթող դէպքերու և նոյնիսկ առանց դիտումի առաջ եկած պատահարներու:

Արդ, տեղակալ Քօթպիւս չպիտի ներէր Մարթայի փախուստը, մանաւանդ անոր համար որ ինք ծաղու առարկայ պիտի ըլլար երբ կեղծ գանձին պատմութիւնը բերնէ բերան զրցուէր: Այդ պարագային, իր կատաղութեան մէկ նոպային, ան պիտի կրնար երթալ օգնական ուժ բերել, և ամէն բան կրակի ու արիւնի մատնել, ոչ միայն Սէնթ-Պարպի ագարակներուն մէջ, այլև Լ. . . քաղաքին մէջ, որ արդէն այնքան դժբախտ եղած էր պատերազմի այն օրերուն:

Ահա ասոնցմէ էր որ կ'ուզէր խուսափիլ ամէն գնով Մարթա:

Ահա թէ ինչու համար կ'ուզէր արգելափակել երեք պահապանները, առանց հաշուելու զանոնք բանտարկած ըլլալու ուրախութիւնը:

Ահա թէ ինչու այս վայրկեանը այնքան անձկալից էր և սիրտը այնքան ուժով բարախելով հանդերձ՝ այնպէս ցոյց կուտար թէ ինք երկու գերմաններուն աշխատութեամբը կը հետաքրքրուէր, որոնք՝ արիւն քրտինք մտնելով կը տանջուէին և միեւնոյն ժամանակ կը շարունակէին սպառնալից խօսքեր նետել Մարթայի:

Պէտք էր ինք բացարձակապէս պատրուակ մը գտնէր, և լաւ պատրուակ մը, գետնատունին դուռը երթալու, առանց արթընցնելու կասկածը խորամանկ տեղակալին, որ կը սկսէր ահարկու ակնարկներ նետել իր վրայ:

Մարթայի դէմքին վրայ ժպիտ մը ցոլաց, իր կապոյտ խոշոր տէքերը, վայրկեան մը փայլեցան ուրախութեամբ մը: Իր պզտիկ դէմքը, սովորաբար համեստ, սկսաւ արտաբերել կորով ու վճիռ:

Այնքան փնտռուած պատրուակը գտած ըլլալ կը կարծէր:

Մարթա ցոյց տալով տեղակալ Քօթպիւսի երկու զինուորները, որոնք կը տանջուէին խռովին շուրջը այնքան գէշ գործիքներով, պոռաց:

«Յիմար եմ եղեր: Յիշեցի որ վարը, դրան ետեւ քարահատ գործիք մը և բրիչ մը կայ: Փոշրելու համար անոնք աղէկ գործի կուգան:»

Եւ ուղղուեցաւ դէպի գետնայարկին մուտքը, այնքան բնական գնացքով մը որ՝ տեղակալ Քօթպիւս ոչ միայն չկասկածեցաւ, այլեւ գնահատեց զինքը իր գեղեցիկ գաղափարին համար:

Եւ ահա խոյսացաւ դէպի վանդակադուռը և սկսաւ խառնել հին գործիքները, որոնք իրապէս հոն կը գտնուէին:

Եւ այդ միջոցին մեղմ ձայնով մը կանչեց ժիւլիէնը, որ սողոսկեցաւ դէպի գետնայարկը և շանալով չերեւիլ, հարցուց:



Մարթա մեղմ ձայնով կանչեց ժիւլիէնը

«Ներսը ի՞նչ կ'ընեն հիմա գերմանները:»

«Իրենց հաւատացուցի թէ գանձեր կան հոն, ու զայն կը փնտռեն», պատասխանեց Մարթա:

Եւ շուտ մը ցած ձայնով ըսաւ:

«Պէտք է բանտարկել զանոնք հոս: Դուռն ինծի պիտի օգնես քաշելու համար այս վանդակադուռը, որ շատ ծանր է ինծի համար: Եւ յետոյ պէտք է շարժես կղպանքը որ անշուշտ աղէկ մը ժանգոտած ըլլալու է: Ա՛ռ, ահա բանալին...:»

Եւ նետեց բանալին ժիւլիէնի:

Այդ վայրկեանին տեղակալ Քօթպիւս պոռաց:

«Է՛հ, աղէկ, այդ քարահատը, այդ բրիչը վաղուա՞ն համար է... ինչո՞ւ չես բերեր:

— Ահա՛ւասիկ», պատասխանեց Մարթա ցոյց տալով առաջին անգամ ձեռքը անցած գործիքը:

Միայն թէ փոխանակ տեղակալ Քօթպիւսի քով երթալու, նշան ըրաւ ժիւլիէնի, որ կը լրտեսէր բոլոր այդ շարժումները: Երկուքը մէկանց իրենց բոլոր ուժովը սկսան երկաթէ ծանր վանդակը քաշել:

Հիմա այլեւս երկուքն ալ գետնայարկէն դուրս կը գտնուին . վանդակը սկսաւ դառնալ : Բայց կարծես թէ խորհրդաւոր ձեռք մը կատարելապէս գոցուիլը կ'արգիլէր : Ժիւլիէն տեսաւ երկաթէ փոքր ձող մը , որ ծակերէն մէկուն մէջ անցած , արդեւք կ'ըլլար վանդակադուռին գոցուելուն :

Այդ չարապատեն երկաթէ ձողը վերցնելու համար կրկին նոյն գետնայարկը անցնիլ պէտք էր : Ժիւլիէն չի վարանեցաւ . ծռեցաւ , ներս մտաւ և հարկ եղածը քրաւ : Բայց հին երկաթներու ազմուկէն ետին դառնալով տեղակալ Քօթպիւս . ամէն բան հասկցաւ և սկսաւ հրամաններ արձակել իր երկու մարդոց :

Եւ ահա երեք Գերմաններ խոյացան :

Ժիւլիէն շուտով ըմբռնեց կացութիւնը :

Եթէ դուռը կրկին բանալով գետնայարկէն դուրս ելնել ջանար և այնպէս գոցէր , երբեք ժամանակ չպիտի ունենար այս կրկնակ գործողութիւնը կատարելու :

Արդէն երկու զինուորները իրմէ հազիւ քանի մը մէթր հեռուն կը գտնուէին :

Եթէ ընդհակառակը , վանդակադուռը հրելով բաւական անաբաղէկ մը գոցելու համար , այդ բանը ինք մինակը պիտի կրնար ընել և Մարթա պիտի ազատէր :

Քաջարի տղան չվարանեցաւ և ուժովը ուժգին հրեց մասամբ բաց ծանր դուռը որ աղէկ մը փակուեցաւ : Ժիւլիէն իսկոյն գոցեց կղպանքը և բանալին նետեց Մարթայի պոռալով . (Շար.)

ԱՐԴԱՐԱԴԱՏ ՁԻՆ

Քանի որ է ի վեր դաշար շըրջադայած ատեն ականատես եղայ դիպուածի մը , զոր չա'տ անգամ անտարբեր կերպով դիտած եմ , բայց երբեք չեմ կրցած դատել :

Ննդիրը ձիու մը կողմէ կատարուած եղելութեան մը շուրջ կը դառնայ :

Մարդ մը , իր ձին կը տանէր , մօտակայ մարգագետինը : Անմիջապէս որ հոն կը հասնէր , պախուցը կը հանէր , որպէսզի՝ ծնօտը ազատ շարժէ , թապլտկի և պըտըտկի ու վազվզէ :

Բայց այս անգամ—ինչպէս միշտ—ձին հազիւ թէ ինքզինք ազատ զգաց , իր ոտները բարձրացնելով , քիչ մնաց որ իր տիրոջ աքացի տար :

Երբ վտանգը անցաւ , երբ մարդը նշմարեց որ ես ալ կը հետաքրքրուիմ , ինձ դառնալով , քիչ մը փիլիսոփայօրէն ըսաւ .

— Ի՞նչպէս կը մեկնես բարեկա'մ , ձիւն այս արարքը . կ'ենթադրեմ թէ՝ ասոր կը նմանին , շատ մը մարդիկ որոնք իրենց տրուած չնորհը կը փոխարինեն ապերախաւութեամբ :

— Մարդ , — պատասխանեցի — չեմ կրնար մարդոց արարքը կենդանիներու արարքէն հետ բաղդատելով քեզ բացատրութիւն տալ :

Բայց ձիուն տէրը պատասխանեց :

— Դո՛ւն տեսար որ՝ հազիւ թէ զինքը ազատ արձակեցի և ահա երկու աքացի տուաւ ինձի .

— Այո՛, տեսայ...

— Եւ դուն, կը կարծե՞ս որ անոնք նուէր մըն էին իբր վարձաւորութիւն իրեն ազատութիւն տուողին :

— Կարծեմ, այո՛... :

— Ուրեմն հիմայ կը խոստովանիմ իրաւամբ, թէ ես էի որ չը կրցի հասկնալ այդ արարքը եւ չկրցի բացատրել զայն...

— Ես դիւրաւ պիտի բացատրեմ—պատասխանեցի մարդուն— Առաջին անգամ դուն առերեւոյթ բան մը կը պաշտպանես, խորհելով որ դուն քաւիք ձիուն ազատութիւնը. մինչդեռ իրականապէս վերադարձուցիր այն ինչ որ իրն էր : Հետեւաբար կենդանին կ'աքացէ ոչ թէ «վարձաւորելու», իրեն ազատութիւն տուողը, այլ «պատժելու» համար այն որ զինքը գերիվարած է : Ահա թէ ինչ կերպով ձի մը՝ շատ անգամ կը ստրկեցնէ մարդուն՝ կատարել իր պարտականութիւնները :

T. Caballero Mier

Թարգմ. Սպանիերէնէ

ԽՈՍՐՈՎ Կ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

(Եկտի ԳԵԼԻԷ 25-5-20)

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Լ ՈՒ Ս ՈՒ Ն Կ Ա Յ

Ո՛հ, լուսունկան է դեղնորակ կեցած կապոյտ կամարին տակ : Ան գիշերուան զառ լապտերն է, Եւ մինչեւ այդ մեզ կը հսկէ : Գիշերային պահակն է Ան Պահակներու, ո՛հ, աննման : Դրած է ինքը Աստուած Տեսնելով մութը սարսափած : Այն լուսունկայ ինչ սիրուն ես, Քեզ կը սիրեմ, բա՛յց հեռուն ես : ԲԱՅԿԷՆ ՍՍՄՈՒԷԼ

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԹԻԻ 33

Երկու վանկով կը հնչուիմ,
Զորս գիրերով ալ կը գրուիմ :
Առաջին վանկս է ձայնաւոր,
Կը կարգացուի ան փառաւոր :
Վանկըս երկրորդ իմ անունիս,
Եթէ ըսեմ կը հաւանի՞ս :
Մեծ մայրիկին է սիրելի :
Առանց անոր ան թէ մընայ
Ալ ճար չի հայ կը խենթանայ :
Բան մը մոռցայ ըսելու ես,
Եթէ ամբողջը, զիս, գտնես,
Տունիդ մէջ շատ կը գործածես :
ՓԵՓՐՈՆԷ ՊԷՍԻՄԵՄԷ

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԹԻԻ 34

Ես՝ լացողին հետ եմ լացող
Թշուառին միշտ գուրգուրացող,
Թէ զիս կտրեն ճիշդ մէջտեղէն
Երկու բառեր պիտի գտնեն,
Մին՝ հեղուկ մը սննդարար
Միւսը շունչ կենդանարար :
Վ.

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԹԻԻ 35

Երկու տառով միավանկ,
Կը բոլորեմ տիւ գիշեր,
Ու կը կաղմեմ ժամանակ
Զոր կը յարգեն խիստ քիչեր,
Ինձմէ զոյգ զոյգ առնելով
Ա. Քէն մայրեր որդեսէր
Երգեր չինեն հեշտ աղւոր
Իրենց մանկանց մեղք ու սէր :
Վ. Մ.

Ծ. Խ.— Մեր ընթերցողներուն շատերուն դիմումին զոհացում տալու համար հարկ դատեցինք հանելուկները ամէն թիւով հրատարակել ըստ առաջնոյն :

30 թիւ հանելուկին լուծումն է

ԱՂ

որ է ԱՂ բառին արմատը եւ որ ունի աղի համ, կը տեսնուի ԽԱՂ բառին, կը գործածուի ամէն տունի մէջ, չի դըրուիր ծաղի, կարկանդակի մէջ եւ արմատը կը գտնուի ջուրին մէջ:

31 թիւ հանելուկին լուծումն է

ԼՈՒՍԻՆ

ինչպէս կը տեսնուի առաջին մանկն է ԼՈՒ՝ որ կը խայթէ, երկրորդը ՍԻՆ (իւ վէզ)՝ որ կը բուսնի, իսկ ամբողջն է ԼՈՒՍԻՆ՝ որ կը լուսաւորէ:

Թիւ 32 հանելուկին լուծումն է

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹ (փուլ)

ինչպէս յայտնի է դրոշմաթուղթը քառակուսի ձեւ ունի, կոնակը, որ է խէժաւոր կողմը, երբ լզես ու նամակի պահարանին փակցնես, քաղրէ քաղար կը շքի թղթատարի միջոցաւ:

ԼՈՒԾԵՅԻՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎՐԺ. (Սկիւտար)

Սարգիս Պալեան, Վահրամ Քէհեան, Պօղոս Մելիքեան, Լեւոն Քէհեան, Բեթրակ Էսմէրեան 31 եւ 32ր. Պարոյր Եաղուպեան, Ստեփան Սիսակեան 31ր. Պերճ Աստուածատուրեան 30ր. Օննիկ Ղրուշեան 31ր.

Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎՐԺ. (Կէտիկ Փաշա)

Նուպար Պիւլպիւլեան, Թագուհի Իպրանեան, Ստեփան եւ Աղաւնի Նաւարեան, Աւետիս Աւագեան, Արաքսի Մուշլուեան, Արաքսի Յակոբեան, Արաքսի Վարդուկեան, Գեղամ Սեբեան, Հայկ Սարաֆեան 31 եւ 32ր.

ԹՈՐՈՍԵԱՆ ՎՐԺ. (Գատըգիւղ Մօտա)

Մանուշակ Տատրեան, Յարութիւն Բագրճեան 30, 31 եւ 32ր. Նշան Գրիգորեան 29, 31 եւ 32ր. Հայկուհի Սարաֆեան 31ր. Գրիգոր Քիւրտեան, Հայկ Քիրէճեան 30ր. Վարդանոյշ Իւթիւճեան 29ր.

ՄԱՅՐ ՎԱՐԺԱՐԱՆ

Անահիտ Մէհտէրեան, Բերրոնէ Պէսիմեան 30, 31 եւ 32ր. Յովսէփ Ապագաեան, Հերմինէ Թէփէլիկեան, Տիրուհի Ապագաեան 31 եւ 32ր. Էօժէնի եւ Իսկուհի Գասապեան, Վալանթէն եւ Անուշ Զատիկեան 30 եւ 31ր, Արշալոյս Դանիէլեան 29 եւ 31ր.

ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ (Եէնի Դարու)

Նշանիկ Մութաֆեան, Լուսին Իմէզեան, Ժիրայր Պօղոսեան 31ր. Պարոյր Սանուսեան 32ր.

ԱՐԱՄԵԱՆ ՎՐԺ. (Գատըգիւղ)

Ժիրայր Սաքաեան, Խաչիկ Փափագեան 30 եւ 31ր.

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՔԵՐՅ ՎՐԺ.

(Գատըգիւղ)

Գայիանէ Սաքաեան 30 եւ 31ր.

ՏԱՏԵԱՆ ՎՐԺ. (Մագրիգիւղ)

Եղուարդ Զահրէճեան, 31 եւ 32ր.

ՄԻՆԱՍԵԱՆ ՎՐԺ. (Դումգաբու Էանկա)

Եղուարդ Դութալէլեան 30 եւ 31ր, Նուպար Քէօշէեան 31ր.

Ս. ՅՈՎՀԱՆԵԱՆ ՎՐԺ. (Ռոտոսթօ)

Օննիկ Քերովբեան 31 եւ 32ր.

ՎԻԵՆՆ. ՄԽԻԹ. ՎՐԺ. (Բանկալթի)

Օննիկ Տէր Աբրահամեան 31 եւ 32ր.

ՏԱՅԵԱՆ ՎՐԺ. (Սկիւտար)

Վրէժուհի Մանուշակեան 30ր.

ԼՈՒԾԵՅԻՆ ՆԱԵԻ

Միլթոն Մելիքեան, Գէորգ Տէլիֆէրեան (Դանտիլի) 31ր, Արտաշէն Պէկեան, Վռամ Զաքարեան 31 եւ 32ր. Արտաւազդ Յովսէփեան 32ր.

ԾԱՆՕԹ.— 30, 31 եւ 32 թիւ հանելուկները միանգամայն լէժողներէն

Անահիտ Մէհտէրեանի

Բերրոնէ Պէսիմեանի

Մանուշակ Տատրեանի

Յարութիւն Բագրճեանի

Կը նուիրենք «Զարհուրանքը Կարնոյ Մէջ» անուն գիրքէն մէկ մէկ օրինակ. Ստանալ խմբագրատունէս յառաջիկայ եջ. օր.

FIFTEENTH ENGLISH LESSON

VERBS

To love (սիրել) բային խոնարհումը

If I love = եթէ սիրեմ
If you » = եթէ սիրես
If he loves = եթէ սիրէ
If we love = եթէ սիրենք
If you » = եթէ սիրէք
If they » = եթէ սիրեն

Love = սիրէ

If I loved = եթէ սիրէի
If you » = եթէ սիրէիր
If he » = եթէ սիրէր
If we » = եթէ սիրէինք
If you » = եթէ սիրէիք
If they » = եթէ սիրէին

Let us love = սիրենք

To be (լլլալ) օժանդակ բայով կրաւորական ձեւեր

I am loved = կը սիրուիմ
I was » = կը սիրուէի
I shall be loved = պիտի սիրուիմ
I should be loved = պիտի սիրուէի

Be loved = սիրուէ
I have been loved = սիրուեցայ
I had been loved = սիրուած էի
Being loved = սիրուելով

I shall have been loved = սիրուած պիտի լլլամ
I should have been loved = սիրուած պիտի լլլայի
Having been loved = սիրուած լլլալով

Բ Ա Ռ Ե Բ

I made — այ մէյտ = ես շինեցի
Kite — քայթ = թռուցիկ
High — հայ = բարձր
To fly — թռլ ֆլայ = թռչիլ
After — էֆթըր = ետքը
String — սթրինկ = չուան

Day — տէյ = օր
It went — իթ ուէնթ = գնաց
Up — ըփ = վեր
Air — էէր = օդ
Looked — լուքտ = երեւցաւ
Like — լայք = իբր, պէս

EASY STORIES

III

My Kite

I made a large kite yesterday. I am going to fly it after school. My kite has a very long string, so it can go up very high. One day, when I was flying my kite, it went up, up, up, oh, so high up in the air. that it looked lake a liitle speck in the sky.